

մէկ տեղէն, որ աւետարանի քարոզութիւնը կ'առակէ խնճոյից, ուր Քրիստոս կը լինի «հրաւիրակ¹» որ հոմանիշ է նուիրակին (աստ, 126), «մատուակ» եւ «պաշտօնեայ». եւ դարձեալ «նա ինքնին բազուկս ի վեր հարեալ², ի մէջգետին անցեալ՝ պարգեւատու յինի իւրոցն արժանաշորաց³» իբրեւ թագաւոր մը (424-5): Ուրեմն շատերու պարգեւներ կու տայ նա հոս, բայց ոչ բոլորին զգեստեղէն. եւ այն ալ տաճարին մէջ եւ իւր ձեռքով: Արդարեւ Հոովմայեցիք եւս սեղանի վրայ կը նուիրէին զգեստներ եւ զանազան իրեր (Գար. Ա, 1280, 322). իսկ Պարսիկները՝ տօնական հագուստ մը (Վիգ. Բ, 2215). զոր օրինակ Յազկերտ տուած էր վասակայ «զպատուական հանդերձն» զոր ունէր (Եղիշ. 117), որ կրնայ իմացուիլ թէ խնճոյից պահուն եւ թէ յղուած ի Հայաստան, ինչպէս որ Յազկերտի նախնիներէն մին եւս «ետ տանել. պատմուճան» Զարմանդուխտ տիկնոջ եւ Մանուելի (Փաւս. 245):

1. Նոյնպէս կոչուած նաեւ Եփրեմի թարգ. (Բ, 51): — 2. Այդ բացատրութիւնն հոմանիշ է Փիլոնի ըսածին, «ծղիս ի վեր ամբարձեալ՝ յառաջ մատիցուց» (Ճոց. 240), որ է ըստ յն. բնագրին պատրաստուիլ, ձեռնարկել զորձի մը: — 3. Վենետկոյ տպ. «արժանեացն» ըստ Պարթս. օր. իսկ Պոլսոյ տպ. և Վենետ. զրչ. կամ սրբազրեալ օրինակներն ունին «արժանաւորաց»: